«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2017 թվականի

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2016 թվականի գործունեության արդյունքների և 2017 թվականի խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2016 թվականի գործունեության արդյունքները և 2017 թվականի խնդիրներ մասին»** հարցը (զեկուցող՝ կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն **արձանագրում է.** հաշվետու ժամանակաշրջանում «Ամբերդ» հետազոտական կենտրոնն ավարտին է հասցրել 2015 թ. հաստատված 5 հետազոտական թեմաների հրատարակման և հրապարակայնացման աշխատանքները: Հրատարակված «Ամբերդ» մատենաշարերն առաքվել են համալսարանում հաստատված կարգով առաքման ենթակա բոլոր կազմակերպություններին: Կենտրոնը, համագործակցելով ՀՊՏՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ, հրատարակված աշխատանքները զետեղել է համալսարանի կայքում: Բացի այդ, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը հավելյալ կազմակերպել է հրատարակված նյութերին առնչվող լուսաբանումներ: Կենտրոնն իրականացված հետազոտությունների արդյունքների հրապարակայնացման ուղղությամբ իրականացրել է նաև այլ հավելյալ հասցեական աշխատանքներ: Մասնավորապես, հետազոտական թեմաների կատարման ընթացքում կազմակերպված գիտական սեմինարներից զատ, կենտրոնի կողմից գիտական և մասնագիտական հանրույթի ներկայացուցիչների ներգրավմամբ կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ ՀՀ կառավարությունում, համալսարանում, ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպված աշխատաժողովում: Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ջանքերով կատարված հետազոտությունների արդյունքներին առնչվող լուսաբանումներ են կազմակերպվել զանգվածային լրատվության միջոցներով, մեկնաբանություններ են տրվել տնտեսագիտական ու գործարար հանրույթին ուղղված որոշ մասնագիտացված էլեկտրոնային կայքերի: Համալսարանի ներքին շահակիցների շրջանում հետազոտությունների արդյունքների հասանելիության բարձրացման նպատակով պատվիրվել և համալսարանի տարածքում զետեղվել են QR պաստառներ: Կենտրոնը պարբերաբար թարմացրել և համալսարանի կայքում երեք լեզուներով ծավալուն տեղեկատվություն է տեղադրել իր հետազոտական ծրագրերի և մասնագիտացումների ուղղությունների

վերաբերյալ: Ֆինանսական հատվածի հետազոտությունների ամփոփ արդյունքներն արտացոլող ընդհանրացումները նույնպես զետեղվել են օտար լեզուներով:

Կենտրոնը շարունակել է արտաքին շահակիցներին հաշվետվողականության ավանդույթը: Մշակել ու լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ջանքերով համալսարանի կայքում երեք լեզուներով զետեղել է նախորդ տարվա գործունեության արդյունքներն ու հրապարակումների համառոտագրերն արտացոլող հաշվետվությունը:

2016 թվականին կենտրոնի հետազոտողների կողմից հրապարակվել է 6 մենագրություն, որից 2-ը օտար լեզվով՝ արտերկրի հրատարակությունների կողմից: Միջազգային գրախոսվող ամսագրերում տպագրվել է 16 գիտական հոդված, հրապարակվել է 6 հոդված արտերկրում կազմակերպված գիտաժողովների նյութերում: Կենտրոնի հետազոտողները մասնակցել են արտերկրում կազմակերպված մեկ միջազգային աշխատաժողովի: Նման ակտիվությունը, ինչպես նաև հանրային քաղաքականության հետազոտությունների բնագավառում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի մասնագիտացումը նպաստել են, որ կենտրոնը հայտնվի արտերկրի առաջատար հետազոտական կենտրոնների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, 2016 թվականին «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեության վերաբերյալ ծավալուն անդրադարձ է կատարվել Ռազմավարական հետազոտությունների ռուսական ինստիտուտի (РИСИ) «Ուղեղային կենտրոնները» ԱՊՀ երկրներում և Վրաստանում. կառուցվածքը, նպատակները, զարգացման հիմնական միտումները» զեկույցում:

2016 թվականին կենտրոնում իրականացվել են 2 դրամաշնորհային հետազոտություն՝ «ՀՀ ֆինանսական շուկաների վիճակը և զարգացումները» և «Կրթական ծրագրերի ու տեխնոլոգիաների հետազոտություններ և մշակումներ»: Հետազոտական թեմաները կատարող խմբերում ներգրավված են եղել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի 3 ներկայացուցիչ, կենտրոնի 2 ներկայացուցիչ, 4 ասպիրանտ և 10 ուսանող: «ՀՀ ֆինանսական շուկաների վիճակը և զարգացումները» թեմայի շրջանակներում մշակվել և ամսական, եռամսյակային ու տարեկան տեսությունների սկզբունքով համալսարանի կայքում լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համագործակցելով զետեղվել են ՀՀ ֆինանսական հատվածն ընդգրկող 7 թեմատիկ զեկույցներ, պայմանագրային հարաբերություններ են հաստատվել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԵՔՍ Արմենիա» ՓԲԸ հետ, որի պատվերով իրականացվել է «Կենտրոնական գործընկերոջ ինստիտուտի ներդրման հնարավորությունները և նախընտրելի մոդելը ՀՀ-ում» թեմայով հետազոտություն: «Կրթական ծրագրերի ու տեխնոլոգիաների հետազոտություններ և մշակումներ» թեմայի շրջանակներում իրականացվել է «Մենեջմենթ», «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ», «Մարքեթինգ», «Հաշվապահական հաշվառում և հարկում», «Բնա-

պահպանություն և բնօգտագործում», «Զբոսաշրջություն» մասնագիտու-թյունների կրթական ծրագրերի իրականացման և ուսումնական ծրագրերի կազմման միջազ-գային փորձի բենչմարքինգ՝ Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների շուրջ 200 բուհերի շրջանակներում, մշակվել և փորձարկվել է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի վարկանշավորման կարգ, որի արդյունքների առնչությամբ կազմակերպվել է 4 մասնագիտական ընդլայնված քննարկում համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների և ամբիոնների վարիչների մասնակցու-թյամբ: «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2014-2018 թթ. գործունեության բարելավման գործողությունների պլանով» նախատեսված գործողությունների շրջանակներում իրականացվել են համալսարանի մագիստրա-տուրայի և բակալավրիատի ուսանողների թվով 4, ինչպես նաև համալսարանի շարունակական կրթության և կարիերայի բաժնի հետ համատեղ կազմակերպվել են հանրապետության տարբեր դպրոցների աշակերտների սոցիոլոգիական հարցումներ, որոնց վերլուծության արդյունքներն արտացոլող ամփոփ հաշվետվությունները տրամադրվել են շահառուներին: Իրականացվել են ՀՀ աշխատաշուկայի և կրթական շուկայի համալիր հետազոտություններ:

Կենտրոնում հետևողական աշխատանքներ են իրականացվել գործունեության միջազգայնացման և միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ: Համագործակցության հուշագրի կնքման ուղղությամբ բանակցություններ են վարվել Չինաստանի Շենսիի մանկավարժական համալսարանի «Կենտրոնական Ասիայի ինստիտուտի» հետ: Մշակվել և ֆինանսավորման նպատակով Հայաստանում Չինաստանի դեսպանատան դիտարկմանն է ներկայացվել «Մեկ գոտի-մեկ ճանապարհ ծրագիրը և հայ-չինական տնտեսական համագործակցության ընդլայն-ման հեռանկարները» թեմայով հետազոտության իրականացման նախագիծ: Համալսարանի արտաքին կապերի բաժնի հետ համագործակցելով մշակվել և ERASMUS PLUS-ի դրամաշնորհի հայցմանն է ներկայացվել «Բարձրագույն կրթության սահուն վերափոխման նպատակով Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի հետազոտական և նորամուծական կարողությունների զարգացում (ԻՆՀԵՆՍ)» ծրագիրը: Արտերկրի գործընկերների հետ հաստատված կապերի արդյունքում «Ամբերդ» հետազոտական կենտրոնն իբրև գործընկեր ներգրավվել է Միացյալ Թագավորության Փլայմաուֆի համալսարանի կողմից NORFACE-ի դրամաշնորհի հայցմանը դիմած «Գեթ ՍԵԹ: Կայուն կրթություն վերափոխման համար (SET- Sustainability Education for Transformation)» ծրագրում:

Ի կատարումն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի՝ 2016 թվականի հուլիսի 15-ի որոշման, 2016 թվականի սեպտեմբերին կենտրոնում իրականացվել են կառուցվածքային որոշ վերափոխումներ: Մասնա-վորապես, կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտու-

թյուններ» և «Սոցիալ-տնտեսական զարգացման հետազոտություններ» ծրագրերի միավորմամբ ձևավորվել է «Տնտեսագիտական հետազոտությունների» ծրագիրը, որի մասնագիտացումներ են ընտրվել՝ մակրոտնտեսական հետազոտությունների և կանխատեսումների իրականացումը, տնտեսության ճյուղերի (ոլորտների), տարբեր ապրանքային շուկաների, ֆինանսական համակարգի, տարածական զարգացման, արտաքին հատվածի և ինստիտուցիոնալ հետազոտությունների իրականացումը, ինչպես նաև ոլորտային զարգացման մշակումները: Ընդլայնվել է կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի շրջանակը, ինչի արդյունքում վերջինը վերակազմակերպվել է իբրև «Հանրային քաղաքականության և ազգային անվտանգության հետազոտությունների» ծրագիր, որի մասնագիտացումներ են ընտրվել՝ պարենային և ֆինանսական անվտանգության բնագավառի հետազոտությունները, հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների մասնակցության ընդլայնման ձևաչափերի մշակման հետազոտությունները: Կենտրոնում ձևավորվել է «Կրթական գործընթացի և տեխնոլոգիաների հետազոտությունների» ծրագիրը, որի հետազոտողները մասնագիտացել են բարձրագույն կրթության շուկայի, աշխատաշուկայի հետազոտությունների, համալսարանի կրթական գործընթացի որակի ապահովման տեղեկատվական աջակցման, կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգի, կրթական ծրագրերի մշակման, կրթական ծրագրի ներքին ու արտաքին շահառուների սոցիոլոգիական հարցումների իրականացման և բավարարվածության գնահատման, կրթական գործընթացում դասավանդման, ուսումնառության ու գնահատման նորարարական տեխնոլոգիաների ուսումնասիրության բնագավառներում:

Միաժամանակ, գիտական խորհուրդն **արձանագրում է՝** դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնցից են՝

- արտաքին շահառուների հետ համագործակցության ընդլայնման դանդաղ ընթացքը և չհամակարգված բնույթը,
- հետազոտությունների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ոչ մեծ թիվը,
- արտերկրի գործընկերների շրջանակի ընդլայնման դանդաղ ընթացքը և չհամակարգված բնույթը,
- հետազոտական արդյունքների առևտրայնացման ոչ բավարար մակարդակը,
- իրականացված հետազոտությունների արդյունքների՝ օտար լեզվով հասանելիության ապահովման դանդաղ ընթացքը,
- որոշակի խնդիրներով մասնագիտացած փորձագետների շրջանակի ընդլայնման և նրանց մեդիաակտիվության դանդաղ ընթացքը,
- տնտեսագիտության բնագավառում հրապարակվող հետազոտությունների տեսակարար կշռի նվազումը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2016 թվականի գործունեության արդյունքները գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել «Ամբերդ» հետազոտական կենտրոնին՝**
   1) ակտիվացնել ջանքերը Հայաստանում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտությունների շահառուների շրջանակի ընդլայնման, մասնավորապես, մասնավոր հատվածից գործընկերների ներգրավման և հետազոտական պատվերների ներգրավման ուղղությամբ.
   2) արտաքին շահառուների հետ համատեղ քննարկումների հիման վրա թարմացնել կենտրոնի հետազոտական առաջնահերթությունների ցանկը (թեմաների բանկը).
   3) դիտարկել կենտրոնի կողմից խորհրդատվական և փորձագիտական ծառայությունների մատուցման ներքին հնարավորություններն ու սահմանափակումները: Ուսումնասիրել Հայաստանում պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունների կողմից հետազոտական, խորհրդատվական կամ փորձագիտական ծառայությունների գնման հայտարարությունների հաճախականությունը, ուղղվածությունը, մրցույթներին մասնակցելու պայմանները, և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գիտական խորհրդին զեկուցել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից փորձագիտական ու խորհրդատվական ծառայությունների շուկա մուտք գործելու առկա հնարավորությունների, խոչընդոտների ու սահմանափակումների վերաբերյալ.
   4) դիտարկել կենտրոնի կողմից վճարովի հիմունքներով հետազոտական կարողությունների փոխանցման բնագավառում վերապատրաստումների և թրեյնինգի ծրագրերի իրականացման հնարավորություններն ու սահմանափակումները.
   5) համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից ձևավորել կենտրոնի հետ համագործակցող փորձագետների կայուն շրջանակ և համատեղ ջանքերով նպաստել կենտրոնի մշակումների հրապարակայնացմանը.
   6) ուսումնասիրել կենտրոնում համալսարանի մագիստրատուրայի գիտահետազոտական փորձառության և ասպիրանտուրայի հետազոտական փորձառության անցկացման հնարավորություններն ըստ մասնագիտությունների, տրամադրել այդ տվյալները շարունակական կրթության և կարիերայի կենտրոնին և հնարավորին չափով ավելացնել փորձառության ուսանողների թիվը կենտրոնում.

7) ակտիվացնել ջանքերը արտերկրում գործընկեր հետազոտական կենտրոնների բացահայտման, նրանց հետ համագործակցության ձևաչափերի մշակման, համատեղ հետազոտությունների իրականացման ուղղությունների հստակեցման, համատեղ հետազոտությունների և հրապարակումների իրականացման, տեղական ու միջազգային դրամաշնորհների մրցույթներին միասին մասնակցության, ինչպես նաև համատեղ գիտական միջոցառումների իրականացման ուղղությամբ.
8) ակտիվացնել ջանքերը տեղական և արտերկրի դրամաշնորհային մրցույթներին մասնակցելու ուղղությամբ:

3. 2017 թ. առաջնահերթ խնդիրներ համարել՝

1) տնտեսագիտական հետազոտությունների բնագավառում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների հետևողական բարձրացումը և փորձագետների ինստիտուտի ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը.
2) կենտրոնի գործընկերների շրջանակի ընդլայնումը.
3) կենտրոնի գործունեության ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցումը.
4) արտաքին դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերին կենտրոնի մասնակցության ընդլայնումը.
5) կենտրոնին առնչվող օտար լեզվով տեղեկատվական նյութերի հրատարակումը և կենտրոնի հետազոտությունների օտարալեզու սեղմագրերի հրատարակումը.
6) կենտրոնի հետազոտությունների արդյունքների՝ համալսարանի ուսումնամեթոդական նյութերում և կրթական գործընթացներում ներդրման նպաստումը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

12.05.2017 թ.